ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 21-ը օգոստոսի 2018թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան (ԳԱՊ),
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի 13.07.2018թ. 397/ԴՎԱ հրաման,
ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության պլանավորման և ապահովման բաժնի պետ, գնդապետ Զ. Մելիքյան,
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուխտյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, ավագ լեյտենանտ Ս. Նիկոլյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-րդ դասի խորհրդական Ա. Գրիգորյան:
Բացակայում էր՝ ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. «Ավանգարդ» ՍՊԸ կողմից 21.08.2018թ. թիվ 1586 գրության քննարկման վերաբերյալ.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. «Ավանգարդ» ՍՊԸ կողմից 21.08.2018թ. թիվ 1586 գրության քննարկման վերաբերյալ.

(Ա. Գրիգորյան)

1.1 «Ավանգարդ» ՍՊԸ կողմից 21.08.2018թ. թիվ 1586 գրության համաձայն կազմակերպությունը հրաժարվել է պայմանագրի կնքումից, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժվել է և մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելուց:

1.2 Քանի որ «Ավանգարդ» ՍՊԸ հրաժարվել է պայմանագիր կնքելուց գնահատող հանձնաժողովի կողմից հաշվի առնելով, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով մասնակիցների կողմից առաջարկված նվազագույն գները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, իսկ 2-րդ չափաբաժնի մասով հրավերին համապատասխան է գնահատվել մեկ մասնակցի հայտ, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, 21.08.2018թ. որոշում է կայացվել ծանուցել մասնակիցներին գնի նվազեցման նպատակով 24.08.2018թ. ժամը 12:00-ին բանակցությունների անցկացման վերաբերյալ: Սահմանված ժամկետում միայն «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ ներկայացել է բանակցություններին, սակայն առաջարկված գները թողել են անփոփոխ:

1.3 24.08.2018թ. հաշվի առնելով բանակցությունների արդյունքները «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների 2-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ- ն, իսկ 1-ին չափաբաժնի մասով ընթացակարգը չի կայացել համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի /հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

1.4 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

1.5 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Զ. Մելիքյան

Գնահատող Գ. Ուխտյան

Գնահատող Ս. Նիկոլյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 05-ը սեպտեմբերի 2018թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պլանավորման և ապահովման բաժնի պետ, գնդապետ Զ. Մելիքյան,
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուխտյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-րդ դասի խորհրդական Ա. Գրիգորյան:

Բացակայում է՝ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, ավագ լեյտենանտ Ս. Նիկոլյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հավելված 6.1 ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում բացակայում է հրավերող նախատեսված ապրանքի արտադրության տարեթիվը և փաթեթավորմանը ներկայացվող պահանջը, ինչպես նաև ներկայացված «մասնագիտական փորձառությունը» հիմնավորող նմանատիպ պայմանագրում բացակայում են պայմանագրի 3-րդ կետով նախատեսված պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածները, որտեղ ըստ պայմանագրի պետք է նշված լինի Ապրանքի տեսակը, քանակը և արժեքը: Ուխտի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 05.09.2018թ. ծանուցել մասնակցին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է անհամապատասխանությունները և նիստը շարունակվել է:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:

1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 07.09.2018թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը, ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Զ. Մելիքյան

Գնահատող Գ. Ուխտյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան